

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ՀԱՅԿԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Ս.Մխոյանի կողմից

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	2
1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ	3
2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ	36
3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ	37
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ	38
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ	43
6. ՀԶԾ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ) ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՎԵՐԱՀՄԿՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՆԱՑՈՒՄԸ	47
ԵԶՐԱՓԱԿՈՒՄ	50
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ՊԱՀԱՆՁՈՂ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՕՐԴԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԻ -----	51

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) հասարակական համաձայնության փաստաթուղթ է, այն ներկայացվել է համայնքի ղեկավարի կողմից, մշակվել և կազմվել է համայնքի ղեկավարին կից գործող համայնքի զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի կողմից անցկացված հանրային լսումների արդյունքներին համահունչ՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները, ինչպես նաև բնակչության մասնակցության գործոնը տեղական ինքնակառավարման բնագավառում:

ՀԶԾ-ն արտացոլում է այն հարցերը, որոնք համայնքի բնակչության տեսանկյունից առավել կարևորներն են, որով համայնքը սահմանում է, թե բնակիչներն ինչպիսի համայնք են ցանկանում ունենալ 5 տարի հետո և ցանկալի արդյունքներին հասնելու համար ինչ քայլեր պետք է ձեռնարկվեն: Համայնքի մասնակցային կառավարումը շահագրգիռ խմբերին ներգրավելու միջոցով դիտարկվում է որպես տեղական իշխանությունների հանդեպ վստահության աստիճանի բարձրացման միջոց, քանզի տեղական իշխանություններն ավելի մոտ են կանգնած բնակիչներին և իրենց մատուցած ծառայություններով ուղղակիորեն ազդում են նրանց առողջության, կենցաղի և կենսամակարդակի վրա:

Ներկայացվող ՀԶԾ-ն հիմնված է հեռահար մտածողության, ռազմավարական պլանավորման գաղափարների վրա և առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Հայկավանի համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ: Այն ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում: ՀԶԾ-ում ներառված են համայնքի բոլոր պարտադիր խնդիրները և դրանց լուծման նպատակով նախատեսվող միջոցառումները: Միջոցառումները հստակ նկարագրված են, իսկ նախատեսված արդյունքները՝ չափելի: Դրանց իրականացումը շարունակաբար ենթարկվելու է մշտադիտարկման, գնահատման, որպեսզի սահմանված թիրախներից շեղումների դեպքում հնարավոր լինի քայլեր ձեռնարկել միջոցառումները պլանավորված հուն վերադարձնել, որպեսզի մշակվեն միջոցառումների իրականացման ավելի արդյունավետ, այլընտրանքային տարբերակներ և հետագայի համար դասեր քաղվեն:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՀՀ Շիրակի մարզի Հայկավան գյուղը Ախուրյանի տարածաշրջանի հյուսիս-արևմտյան մասի վերջին գյուղն է : Որպես բնակավայր, ունի շուրջ հինգ հազար տարվա պատմություն : Գյուղի հյուսիս-արևմտյան հատվածում հայտնաբերվել է վաղ հեթանոսական շրջանի բնակատեղի, դամբարանադաշտ, ներկայիս գերեզմանատան տարածքում պահպանվել են վաղ քրիստոնեության ժամանակաշրջանից մնացած մատուռի հիմքեր, իսկ արևելյան հատվածում միջնադարի արաբական ժամանակաշրջանին վերաբերվող բնակատեղի կա :

Ուշ միջնադարից գյուղի ներկայիս տարածքը բնակեցված է եղել թուրքական ցեղերով, բնակվել են նաև հույներ, իսկ 1920-ական թվականներից այն վերաբնակեցվել է հայերով, ովքեր Մեծ Եղեռնից մազապուրծ եղած՝ գաղթել էին Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից, մասնավորապես՝ Մուշից, Ալաշկերտից, Բասենից, Խնուսից և Ղարսի մարզի Ղզլախչախ բնակավայրից:

Նախկինում գյուղը մտել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ: Մինչև 1945 թվականը կոչվել է Բաջողի: 1945 թվականի դեկտեմբերի 7-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի որոշմամբ վերանվանվել է Հայկավան:

Գյուղում մինչև 1991 թվականը գործել է «Չկալովի» անվան կոլտնտեսությունը, որն իր հզորությամբ 6-րդ էր Ախուրյանի շրջանում :

Գյուղը 1988 թվականի դեկտեմբերի 7-ի երկրաշարժի հետևանքով տուժած բնակավայրերից է, եղել են բավականին ավերածություններ ,քանզի տարածքը գտնվում է 0.4g բարձր սեյսմիկ վտանգի գոտում՝ 8-9 բալ:

1988 թվականից հետո իրականացված երկրաֆիզիկական հետազոտությունների արդյունքներով և ՀԽՍՀ կառավարության որոշմամբ գյուղը պետք է ամբողջությամբ տեղափոխվեր նոր տարածքի վրա, սակայն ծրագիրը մինչև վերջ չի իրականացվել՝ իր հետ բերելով բազմաթիվ և բազմաբնույթ հիմնախնդիրներ :

Հետերկրաշարժյան երկու-երեք տարիների ընթացքում նոր գյուղատեղում գերմանական ավետարանչական եկեղեցու և «Դիակոնիշեն-Վերկ», կազմակերպության ֆինանսավորմամբ կառուցվել է քառասունվեց առանձնատուն՝ երեք հարյուր վաթսուհին փոխարեն և մեկ

մանկապարտեզի շենք:Վերջինիս տարածքի բարեկարգման և կոմունալ ենթակառուցվածքների անցկացման աշխատանքները մնացել են անավարտ :

Բացի այն,որ համայնքի տարածքում կան հեթանոսական և արաբական շրջանի բնակատեղիներ, վաղ քրիստոնեության ժամանակաշրջանից մնացած մատուռի հիմքեր ,կա նաև հուշարձան-կոթող՝նվիրված Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հիշատակին,տեղադրված են խաչքար –հուշարձաններ Մեծ Եղեռնի,երկրաշարժի զոհերի և տարբեր պատերազմներում անհայտ կորած մեր հայրենակիցների հիշատակին :

2008 թվականին նախկին համագյուղացիներ,բարերարներ Աբրահամ և Սպարտակ Խաչատրյանների կողմից կառուցվել և նույն թվականի նոյեմբերի 15-ին օծվել է համայնքի «Սուրբ Խաչ Ավետարան» եկեղեցին:

Հայկավանցիները ակտիվ մասնակցություն են ունեցել Հայրենական Մեծ պատերազմին,ավելի քան 220 զինվոր է մարտնչել պատերազմի դաշտում,նրանցից շատերը զոհվել են :

Հայկավանցի կամավորականները մասնակցել են նաև Արցախյան ազատամարտին :

Համայնքի բնակչության կազմում մեծ տեսակարար կշիռ ունեն միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն ունեցողները :Եղել են և կան ծնունդով Հայկավանցի գիտնականներ,գիտաշխատողներ,ԲՈւՀ-երի դասախոսներ և այլ նշանավոր մարդիկ ինչպիսիք են .

Աշոտ Դավթյան՝ Հայրենական Մեծ պատերազմի փառքի 1-ին,2-րդ և 3-րդ աստիճանի շքանշանակիր

Քերոբ Քերոբյան ՝ Սոցիալիստական աշխատանքի հերոս

Ռաֆիկ Հովհաննիսյան՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր

Թորգոմ Զուհարյան-բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր

Ազատ Մարտիրոսյան՝ Հայաստանի Հանրապետության առաջին դեսպանը Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում :

Հայկավան գյուղը տեղակայված է Շիրակի դաշտավայրի հյուսիս-արևմտյան մասում:

Գտնվում է նախկին շրջկենտրոնից 15 կմ, մարզկենտրոնից՝ 12 կմ և մայրաքաղաքից 130 կմ հեռավորության վրա:

Գյումրի –Արմավիր հանրապետական նշանակության ավտոմայրուղին անցնում է բնակավայրից 9 կմ, իսկ երկաթուղին՝ 15կմ հեռավորության վրա:

Համայնքը սահմանակից է Առափի, Ոսկեհասկ և Ողջի համայնքներին :

Ծովի մակերևույթից միջին բարձրությունը 1580 մետր է:

Հայկականը սահմանամերձ բնակավայր է, արևմտյան հատվածով Թուրքիայի սահմանից գտնվում է մոտ 1 կմ հեռավորության վրա :Համայնքի հողատարածքները ողջ արևմտյան սահմանագծով՝ շուրջ 4 կմ, սահմանակից են Թուրքիային և մոտ 400 հա վարելահող գտնվում է սահմանային ինժեներական ենթակառուցվածքներից ներս :

Գյուղն ընդգրկված է հանրապետության նախալեռնային բնակավայրերի ցանկում: Կլիման չափավոր ցամաքային է ,երբեմն չոր ,շոգ ամառներով, հուլիսի միջին ջերմաստիճանը $+ 18\text{-ից} + 22^{\circ}\text{C}$ է առավելագույն ջերմաստիճանը՝ $+ 36^{\circ}\text{C}$: Ձմեռները չափավոր ցուրտ են,հունվարի միջին ջերմաստիճանը $- 8\text{-ից} -14^{\circ}\text{C}$ է, սակայն նվազագույն ջերմաստիճանը ձմռանը երբեմն հասնում է մինչև -35°C :

Օդի տարեկան միջին ջերմաստիճանը 4-5 աստիճան է: Տարեկան միջին տեղումները կազմում են 590 մմ, որոնք առանձնահատուկ են ապրիլ-մայիս ամիսներին: Տարածքում գերակշռում են լեռնատափաստանային ավազակավային հողերը: Առկա են շինարարական ավազի և տուֆի պաշարներ :

Բնակավայրի տարածքը վտանգված է կարկտահարությամբ , ցրտահարությամբ,ուժեղ քամիներով , տևական երաշտով և զարնանային հեղեղումներով:

Հեղեղումներից պաշտպանվելու համար 1990-ական թվականներին կառուցվել է սելավատար,որը գտնվում է Ողջի համայնքի վարչական տարածքում :Բացի Հայկականից ,այն նախատեսված է զարնանային հեղեղումներից պաշտպանելու նաև հարակից Ոսկեհասկ և Ախուրիկ համայնքների ցանքատարածությունները: Սակայն ներկայումս սելավատարը չի գործում ՝ ինչը զգալիորեն մեծացնում է հեղեղումների վտանգը:

1.2ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակչության մեծամասնությունը արմատներով Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից, մասնավորապես՝ Մուշից, Ալաշկերտից, Բասենից,Խնուսից և Ղարսի մարզի Ղզլախչախ բնակավայրից են:

Համայնքի բնակչությունը 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 1598 մարդ,կա 404տնտեսություն, որից առկա՝ 393 տնտեսություն:


Բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշներն արտահայտվում են հետևյալ կերպ.

Աղյուսակ 1. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	1598
	Տղամարդիկ	763
	Կանայք	835
	0-4 տարեկան	84
	5-6 տարեկան	30
	7-10 տարեկան	64
	11-14 տարեկան	75
	15-17 տարեկան	47
	18-22 տարեկան	144
	23-45 տարեկան	532
	46-62 տարեկան	464
	63 և բարձր տարիքի	158
2.	Կենսաթոշակատուներ, այդ թվում՝	173
	Տարիքային և աշխատանքային	
3.	Փախստականներ	0
4.	Միակողմանի ծնողագուրկ երեխաներ	8
5.	Երկկողմանի ծնողագուրկ երեխաներ	0
6.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	1
7.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	5
8.	Հաշմանդամներ, այդ թվում՝	26
	Մանկուց հաշմանդամներ	2
9.	Աշխատունակ բնակչության թիվը	1331
10.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	46
11.	Երկու և ավելի երեխաներ ունեցող ընտանիքների թիվը	82
12.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	0
13.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	97
14.	Արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը	121

Աղյուսակ 2. Համայնքի բնակչության բնական աճը :

Ցուցանիշներ	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
Բնակչության թիվը տարեսկզբին	1596	1597	1598	1598
Տնտեսությունների թիվը	394	400	408	404
Կենդանի ծնվածներ	16	17	15	18*
Մահացածներ	11	9	8	21*



*2016 թվականի ծնելիության և մահացության ցուցանիշները ներկայացված են դեկտեմբերի 15-ի դրությամբ ունեցած տվյալներով :

1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Հայկական համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր հինգ անդամներով (ընտրված 2015 թ.): Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի միջոցով, աշխատակազմը բաղկացած է տասնմեկ աշխատակցից:


Համայնքապետարանը վարչական շենք չունի և ժամանակավորապես տեղակայված է համայնքի մշակույթի տան շենքում: Շենքը վթարային է, մի քանի սենյակներ, որոնք մասնակի վերանորոգված են, հարմարեցված են աշխատակազմի աշխատանքների կազմակերպման համար: Շենքը գտնվում է գյուղ Հայկական 1 փողոց, շենք 9 հասցեում: Աշխատակազմի համար պայմանները բավարար են, կահավորանքի մի մասը նորացված է, մի մասը դեռևս 1980-ական թվականներից է: Համայնքապետարանը հագեցած է տեխնիկայով, սակայն այն բավարար չէ աշխատակազմի լիարժեք գործունեությունն ապահովելու համար:

Ստորև ներկայացվում են Հայկականի համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների վերաբերյալ տվյալներ :

Աղյուսակ 3. Հայկականի համայնքի ղեկավար և աշխատակազմ

Հ/հ	Պաշտոնի անվանումը (համայնքային ծառայության պաշտոնների մասով նաև՝ ծածկագիրը)	Հաստիքների քանակը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
1.	Համայնքի ղեկավար	1	1	250000
2.	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	1	135000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
3.	Աշխատակազմի քարտուղար 1.2-1	1	1	145000
4.	Գլխավոր մասնագետ-ֆինանսիստ 2.3-1	1	1	136000
5.	Առաջատար մասնագետ 3.1-1	1	1	135000
6.	Առաջին կարգի մասնագետ 3.2-1	1	1	90000
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
7.	Գրադարանավար	1	1	80000
8.	Ակումբավար	1	1	72752
9.	Պահակ	1	1	72752
10.	Պահակ	1	1	72752
11.	Վարորդ	1	1	72752
12.	Հավաքարար	1	1	72752

Գծապատկեր 1. Հայկականի համայնքի աշխատակազմի կառավարման կազմակերպական կառուցվածքը



Աղյուսակ 4. Հայկականի համայնքի ավագանու կազմ

Հ/Հ	Ազգանուն , անուն, հայրանուն	Ծննդյան տարեթիվ	Կրթություն	Մասնագիտություն
1.	Ավետիսյան Մկրտիչ Էլֆիկի	1973	միջնակարգ	-
2.	Բաղդասարյան Սամվել Սերյոժայի	1959	Միջին մասնագիտական	գյուղատնտես
3.	Եդոյան Սպարտակ Գուգենի	1968	միջնակարգ	-
4.	Մանուկյան Աշոտ Վահագի	1972	միջնակարգ	-
5.	Մարտիրոսյան Անդրանիկ Անուշավանի	1966	Միջին մասնագիտական	քանդակագործ

1.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը, որի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ հաստատված կարգով, գնահատվում է ըստ ֆիզիկական վիճակի :

Որոշ ենթակառուցվածքներ և գույքային միավորներ վերջերս են ձեռք բերվել, կառուցվել կամ վերանորոգվել, գործում են անխափան, կան նաև շահագործմանը խոչընդոտող լուրջ թերություններ չունեցողներ, որոնք գնահատվում են գերազանց կամ լավ: Միաժամանակ որոշ գույքային միավորներ գտնվում են վթարային, անսարք կամ անբավարար վիճակում:

Ստորև ներկայացվում է Հայկականի համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցուցակը քանակական և տեխնիկական ցուցանիշներով հանդերձ:

Աղյուսակ 5

Հ/ Հ	Գույքի անվանումը	Տարեթիվը	Քանակը	Հաշվեկշռային արժեքը (<< դրամ)	Ֆիզիկական / Տեխնիկական / վիճակը
1.	Հացի պահեստ	1987	2	269650	վթարային
2.	Հորթանոց	1987	-	97530	վթարային
3.	Մշակույթի տուն	1970	-	645960	վթարային
4.	Նավես	1982	-	4800	վթարային
5.	Բիլիարդ	-	-	-	օգտագործման համար ոչ պիտանի

6.	Գրասեղան	-	2	1200	բավարար
7.	Գեղարվեստական գիրք	-	5692	120000	բավարար
8.	Աթոռ (փափուկ)	-	5	2000	բավարար
9.	Ընթերցասեղան	-	3	5000	բավարար
10.	Գրասեղան	-	5	21147	բավարար
11.	Գրապահարան	-	1	11535	բավարար
12.	Մետաղյա պահարան	-	6	75439	բավարար
13.	Բազմոց	-	1	16918	բավարար
14.	Փոքր պահարան	-	1	11150	բավարար
15.	Կախիչ	-	1	6844	բավարար
16.	Հեռախոս «Ալտայ»	-	1	34989	անսարք
17.	Սիլոսի հոր	-	1	66595	վթարային
18.	Կոլտնտեսության գրասենյակ, ավտոտնակ	1988	12		վթարային
19.	Տրակտոր թրթուրավոր ՂԶ-42	1988		104200	անսարք
20.	Տրակտոր ՂՏ-75	1987	-	42218	անսարք
21.	Տրակտոր ՏՑ-70	1990	-	228700	անսարք
22.	Տրակտոր ՄՏԶ-50	1985	-	60751	անսարք
23.	Տրակտոր ՄՏԶ- 82	1988	-	152493	անսարք
24.	Տրակտոր Տ -25	1988	-	53292	անսարք
25.	Տրակտոր ՄՏԶ-80	1989	-	189328	անսարք
26.	Տրակտոր ՄՏԶ-82	1989	-	189328	անսարք
27.	Կոմբայն հաց. ՍԿ-5	1987	-	22916	անսարք
28.	Կոմբայն հաց. ՍԿ-5	1986	-	24377	անսարք
29.	Կոմբայն « Նիվա»	1989	-	146495	անսարք
30.	Կոմբայն « Նիվա»	1990	-	167104	անսարք
31.	Խոտհնձիչ Ե -281	1989	-	297603	անսարք
32.	Գութան	1987	-	11920	անսարք
33.	Գութան	1985	-	8459	անսարք
34.	Գութան	1989	-	27684	անսարք
35.	Կուլտիվատոր	1987	-	23070	անսարք
36.	Կուլտիվատոր	1988	-	30760	անսարք

37.	Կուլտիվատոր	1989	-	34913	անսարք
38.	Շարքացան ԿՈՄ	1989	-	26915	անսարք
39.	Շարքացան ՍԶՈՒ 3.6	1991	-	14226	անսարք
40.	Շարքացան ՍՕ 4.2	1991	-	14380	անսարք
41.	Պրես պողբորշիկ	1987	-	8997	անսարք
42.	Պրես պողբորշիկ	1990	-	27607	անսարք
43.	Ժատկա ԺՌԲ-427	1991	-	8228	անսարք
44.	Բրդի հակավորող	1986	-	7075	անսարք
45.	Հաց մաքրող ՍՄ- 4	1987	-	8459	անսարք
46.	Գազ 53- Ա	1978	-	25223	անսարք
47.	Գազ 52-04	1979	-	17841	անսարք
48.	ՄՍԶ 45021	1989	-	34912	անսարք
49.	Գազ 52-04	1980	-	17918	անսարք
50.	Գազ 53	1982	-	20609	անսարք
51.	Գազ 52	1985	-	17995	անսարք
52.	ՍԱԶ-3507	1985	-	34912	անսարք
53.	Գազ 52	1986	-	18840	անսարք
54.	Գազ 53	1987	-	38835	անսարք
55.	Գազ 53	1988	-	59982	անսարք
56.	Ցիստերն ԱՍՄՊ 37	1989	-	142188	սարքին
57.	Ավտոբուս ԿՎԶ	1985	-	46370	անսարք
58.	Ռաֆ	1989	-	182000	սարքին
59.	Ուազ	1989	-	72978	անսարք
60.	Վազ- 21213«Նիվա»	1997	1	1800000	սարքին
61.	Տրակտորի կցորդ	1987	-	11150	անսարք
62.	Տրակտորի կցորդ	1988	-	31529	անսարք
63.	Տրակտորի կցորդ	1987	-	39219	անսարք
64.	Տրակտորի կցորդ	1989	-	53830	անսարք
65.	Մանկապարտեզի նոր շենք	1992	-	նվիրատվություն	անավարտ
66.	Մանկապարտեզի շենք քարային	1990	-	նվիրատվություն	հիմնանորոգված
67.	Համակարգիչ	2002	1	նվիրատվություն	սարքին
68.	Տպիչ	2002	1	նվիրատվություն	անսարք

69.	Հեռախոս ՋՏԵ	2007	1	18000	սարքին
70.	Հակակարկտային կայան «Ջենիթ-100»	2007	2	նվիրատվություն	բավարար
71.	Բազկաթոռ	2008	1	30000	բավարար
72.	Սեղան	2008	1	60000	բավարար
73.	Աթոռ	2008	6	32000	բավարար
74.	Պահարան	2008	1	78000	բավարար
75.	Համակարգիչ	2010	1	317000	սարքին
76.	Տպիչ	2010	1	48000	սարքին
77.	Ցուցատախտակ	2010	1	36000	լավ
78.	Համակարգիչ	2011	1	290000	սարքին
79.	Տպիչ	2011	1	82000	սարքին
80.	Սեղան	2011	1	150000	լավ
81.	Աթոռ	2011	6	72000	լավ
82.	Համակարգիչ	2012	1	330000	գերազանց
83.	Ճանապարհային տեսախցիկ	2014	2	440000	գերազանց
84.	Ավտոմեքենա KIA	2014	1	3960000	լավ
85.	Հակակարկտային կայան «Ջենիթ-100»	2014	1	4100000	գերազանց
86.	Բազկաթոռ	2014	1	75000	գերազանց
87.	Մահճակալ մեկհարկանի	2014	50	նվիրատվություն	գերազանց
88.	Խաղալիքի պահարան	2014	4	նվիրատվություն	գերազանց
89.	Ջգեստապահարան տեղանոց 5	2014	6	նվիրատվություն	գերազանց
90.	Մանկական սեղան	2014	14	նվիրատվություն	գերազանց
91.	Մանկական աթոռ	2014	50	նվիրատվություն	գերազանց
92.	Տնօրենի սեղան	2014	1	նվիրատվություն	գերազանց
93.	Գրասեղան	2014	2	նվիրատվություն	գերազանց
94.	Աթոռ	2014	5	նվիրատվություն	գերազանց
95.	Գրապահարան	2014	1	նվիրատվություն	գերազանց
96.	Խոհանոցային կահույք	2014	1	260000	գերազանց
97.	Լվացքի մեքենա	2014	1	130833	գերազանց

98.	Սառնարան	2014	1	180833	գերազանց
99.	Մսաղաց	2014	1	38416	գերազանց
100.	Թեյնիկ	2014	2	40333	գերազանց
101.	Հարիչ	2014	1	19750	գերազանց
102.	Արդուկ	2014	2	37166	գերազանց
103.	Արդուկի սեղան	2014	2	32500	գերազանց
104.	Փռչեկուկ	2014	2	52666	գերազանց
105.	Կշեռք	2014	1	16250	գերազանց
106.	Խոհանոցային պարագա	2014	3	11333	գերազանց
107.	Թավա	2014	2	29583	գերազանց
108.	Խոհանոցային դանակների հավաքածու	2014	1	14333	գերազանց
109.	Խոհանոցային հավաքածու	2014	1	19750	գերազանց
110.	Կաթսա մեծ	2014	1	30000	գերազանց
111.	Կաթսա միջին	2014	1	25000	գերազանց
112.	Կաթսա փոքր	2014	2	22000	գերազանց
113.	Ափսե մեծ	2014	54	21600	գերազանց
114.	Ափսե միջին	2014	54	16200	գերազանց
115.	Բաժակ թեյի	2014	9 կոմպլեկտ	49500	գերազանց
116.	Բաժակ ջրի	2014	50	27500	գերազանց
117.	Գդալ մեծ	2014	9 կոմպլեկտ	36000	գերազանց
118.	Գդալ փոքր	2014	9 կոմպլեկտ	13500	գերազանց
119.	Պատառաքաղ	2014	9 կոմպլեկտ	25200	գերազանց
120.	Դանակ փոքր	2014	9 կոմպլեկտ	25200	գերազանց
121.	Սննդի կտրատելու տախտակ	2014	4	8000	գերազանց
122.	Փլավքամիկ	2014	2	2400	գերազանց
123.	Սխտորձգմիչ	2014	1	2000	գերազանց
124.	Շերեփի մեծ	2014	1	2000	գերազանց
125.	Դույլ պլաստմասե	2014	4	10000	գերազանց

126.	Դույլ էմալապատ	2014	2	18000	գերազանց
127.	Սկուտեղ	2014	4	9400	գերազանց
128.	Սննդային գոգաթի	2014	2	1000	գերազանց
129.	Սննդի տարա մեծ	2014	1	3500	գերազանց
130.	Սննդի տարաներ միջին	2014	4	6000	գերազանց
131.	Սննդի տարաներ փոքր	2014	4	5200	գերազանց
132.	Հացաման	2014	12	6000	գերազանց
133.	Դանակ-գդալ-պատառաքանների պլաստմասե ամաններ	2014	2	2200	գերազանց
134.	Սննդային համեմունքների տարաների կոմպլեկտ	2014	1	9000	գերազանց
135.	Ջրի տարա /50լ/	2014	1	3600	գերազանց
136.	Պլաստմասե տաշտ	2014	2	3400	գերազանց
137.	Սնունդ լվանալու տարա	2014	2	3000	գերազանց
138.	Սպասք լվանալու տարա	2014	2	4000	գերազանց
139.	Սպասքի չորանոց	2014	4	11200	գերազանց
140.	Խոհանոցային սրբիչ սպասքի	2014	10	5500	գերազանց
141.	Խոհանոցային սրբիչ խավոտ	2014	6	2400	գերազանց
142.	Խոհանոցային լաթեր	2014	10	2500	գերազանց
143.	Գոգնոց և բռնիչ	2014	1	950	գերազանց
144.	Խոհանոցային ձեռնոց և սրբիչ	2014	1	950	գերազանց
145.	Ավել գոգաթիակի հետ, պլաստմասե	2014	2	6000	գերազանց
146.	Աղբաման պլաստմասե	2014	4	16000	գերազանց
147.	Լվացքի ծղիկներ	2014	2	3600	գերազանց
148.	Սրբիչների չորանոց	2014	1	12000	գերազանց
149.	Խոհանոցի լվացարանի սիֆոն	2014	2	4200	գերազանց
150.	Սրբիչների կախիչ փոքր	2014	6	2400	գերազանց
151.	Սրբիչների կախիչ մեծ	2014	9	9000	գերազանց
152.	Կենցաղային էլեկտասարքավորումների հոսանքի փոխարկիչներ	2014	3	2400	գերազանց

153.	Գորգ ռետինե	2014	1	4400	գերազանց
154.	Գորգ փոքր	2014	2	4600	գերազանց
155.	Վերմակ ամառային	2015	50	նվիրատվություն	գերազանց
156.	Վերմակ ձմեռային	2015	50	նվիրատվություն	գերազանց
157.	Բարձ մանկական	2015	50	նվիրատվություն	գերազանց
158.	Սավան մանկական	2015	100	նվիրատվություն	գերազանց
159.	Ծրար մանկական	2015	100	նվիրատվություն	գերազանց
160.	Բարձի երես	2015	100	նվիրատվություն	գերազանց
161.	Մահճակալի ծածկոց	2015	50	նվիրատվություն	գերազանց

*1.5 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Հայկականի համայնքի վարչական տարածքում գործող ոչ համայնքային ենթակայության կազմակերպությունները ներկայացված են աղյուսակ 6-ում : Նշված կազմակերպությունների հետ ՏԻՄ-երի համագործակցությամբ արվում է ամեն հնարավորը տվյալ ոլորտներում ծառայությունների արդիականացման և արդյունավետության բարձրացման նպատակով:

Աղյուսակ 6. Հայկականի համայնքում գործող ոչ համայնքային ենթակայության կազմակերպություններ

Հ/Հ	Հանրակրթական դպրոցի		Առողջապահական հիմնարկներ	Փոստային բաժանմունքի առկայությունը	Այլ նշումներ
	տեսակը	անվանումը	տեսակը		
1.	միջնակարգ	«Հայկականի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Բուժման կաբարձա կան կետ	Առկա է	Հայկականի ԲՄԿ-ն գտնվում է Ախուրիկի բուժամբուլատորիայի ենթակայության տակ

1.6 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Կապված համայնքի բյուջեի ֆինանսական հնարավորությունների սահմանափակ լինելու հետ՝ համայնքի տարածական զարգացումը սահմանող քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի՝ գլխավոր հատակագծի , քաղաքաշինական գոտիավորման նախագծի և հողերի օգտագործման սխեմայի մշակումը դեռևս չի իրականացվել, ինչը ևս հանդիսանում է համայնքի՝ լուծում պահանջող հիմնախնդիրներից մեկը :

Համայնքում առկա է գերեզմանատան պարսպի վերակառուցման խնդիր, քանզի այն խիստ վնասված է և վերջին շրջանում չի ենթակվել վերանորոգման :

Համայնքի տարածքում գիշերային (արտաքին) լուսավորության ցանցը ապահովում է համայնքի անհրաժեշտ գիշերային լուսավորության ծածկույթի 60 %-ը, կենտրոնական բոլոր փողոցները լուսավորված են: Համայնքի լուսավորության ցանցի ընթացիկ վերանորոգումներն ու ընդլայնումը շարունակական կերպով իրականացվում է համայնքի բյուջեի հաշվին :

Համայնքն հիմնականում ապահովված է շուրջօրյա խմելու ջրով: Այն մասն է կազմում կենտրոնացված ջրամատակարարման, սնվում է Ղազանչի- Գյումրի ջրագծից: Գյուղում գործում է մեկ ՕԶԿ՝ 250մ³ տարողությամբ, որը կառուցվել է Գերմանական KFW բանկի միջոցներով, շահագործման է հանձնվել 2013 թվականին: Ներհամայնքային ջրային ցանցն ունի մոտ 18 կմ երկարություն, այն հիմնականում կառուցվել է 1960-ական թվականներին, ջրագծի մի մասը՝ մոտ 1 կմ, վերանորոգվել է 2010 թվականին « Հայկական Կարիտաս » բարեսիրական հասարակական կազմակերպության և համայնքի միջոցներով, իսկ մեծ մասն ունի վերանորոգման խիստ կարիք:

Խմելու ջրի մատակարարման ցանցի վերանորոգումը համարվում է համայնքի առաջնահերթ խնդիրներից մեկը:

Համայնքում աղբահանությունը կատարվում է բնակիչների կողմից՝ ոչ կենտրոնացված ձևով::

Համայնքն ունի մեկ կոյուղագիծ 4 կմ երկարությամբ: Այն կառուցվել է նոր թաղամասում և տնտեսությունների միայն 11.7 %-ն է միացված կոյուղագծին : 2011 թվականին հանրապետական բյուջեի միջոցներով իրականացվել են կոյուղագծի վերանորոգման և վերակառուցման աշխատանքներ՝ շուրջ 20.0 միլիոն դրամի չափով:

Համայնքի ցանքատարածությունների 45%-ը ապահովված է ոռոգման ջրով: Ոռոգման ջուրն ինքնահոս է, ցանցն ունի 17 կմ երկարություն, սպասարկվում է «Շիրակ» ՋՕԸ –ի կողմից՝ «Աջափնյակ» ջրանցքով: Ոռոգման ցանցը կիսախողովակներով և խողովակներով է: Ցանցի մի մասը՝ շուրջ 7.5 կմ , հիմնանորոգվել է 2000 թվականին, մնացած մասը գտնվում է ոչ բարվոք վիճակում և ունի վերանորոգման կարիք :

Համայնքն ապահովված էլեկտրաէներգիայով: Էլեկտրաէներգիայի մատակարարումը համայնքին կատարվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ղարս»

մասնաճյուղի կողմից: Էլ. ցանցն ունի մոտ 27 կմ երկարություն ,վիճակը հիմնականում բավարար է,սակայն որոշ հատվածներ կարիք ունեն վերակառուցման:

Համայնքը գազաֆիկացված չէ: Դեռևս 2009 թվականին Հայաստանի Հանրապետության «Գյուղական բնակավայրերի բարեկարգման աջակցություն» ԾԻԳ-ի և համայնքի միջոցներով իրականացվել են շինմոնտաժային աշխատանքներ,անցկացվել է գազատար խողովակաշար` 6 կմ երկարությամբ, որից 4 կմ-ը միջին ճնշման,2կմը` ցածր,տեղադրվել են 4 բաշխիչներ,սակայն գործընթացն ավարտված չէ և գազամուղը չի շահագործվում:

Տների ջեռուցումն իրականացվում է հիմնականում փայտով և աթարով :

Գազաֆիկացման բացակայությունը բացասաբար է անդրադառնում բնակչության կենցաղային նորմալ պայմանների ապահովման վրա,միաժամանակ խոչընդոտ է հանդիսանում համայնքային մանկապարտեզի վերջնական շահագործվան համար :

Համայնքում բենզինի և կերոսինի մատակարարման ենթակառուցվածքներ չկան:

Համայնքի տնտեսությունների մոտ 15 %-ը ապահովված են ֆիքսված հեռախոսակապով: Բնակչությունը հիմնականում օգտվում է «Vivacell», «Beeline» և «Ucom» բջջային օպերատորների ծառայություններից: Համացանցից օգտվում է համայնքի բնակչության գրեթե 80 %-ը Բնակչությունը հնարավորություն ունի դիտելու 9 հեռուստաալիք: Գործում է 1 փոստային բաժանմունք :

1.7ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հայկական համայնքում բնակելի տները հիմնականում առանձնատներ են, որոնց թիվը կազմում է 298,կա նաև 1 բազմաբնակարան բնակելի շենք:

Համայնքում բնակֆոնդի վիճակը, ընդհանուր առմամբ, գնահատվում է բավարար, կառուցված առանձնատները հիմնականում 1960-1975-ականների կառույցներ են` պարբերաբար վերանորոգումներով գտնվում են լավ վիճակում: Բազմաբնակարան շենքը կառուցվել է 1990-ական թվականներին և ունի ջրամատակարարման-ջրահեռացման խնդիր :

Աղյուսակ 7. Համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի և բնակելի առանձնատների թիվը

Հ/հ	Բազմաբնակարան բնակելի շենքեր			Բնակելի առանձնատների թիվը		
	Թիվը	բնակա րանների թիվը	ընդհանուր մակերեսը	այդ թվում 1 հարկանի	այդ թվում 2 հարկանի	ընդհանուր մակերեսը
1.	1 շենք, 4 հարկանի	32	1632քմ	265	33	մոտ 32654քմ

1.8 ՀԱՆՐԱՊԵՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը 2016թ հուլիսի 1-ի դրությամբ կազմում է 1588.31 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողեր են 1294,63 հա –ը, այդ թվում՝ 1071,56 հա վարելահող, 193.4 հա արոտավայր և 29.66 հա այլ հողեր, ոռոգելի է 416.8 հա-ը : Համայնքի հողային հաշվեկշիռը առավել մանրամասն ներկայացված է աղյուսակ 8-ում :

1991 թվականին հանրապետությունում իրականացված հողի սեփականաշնորհման ժամանակ համայնքում սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը կազմում է 1.8 հա :

Աղյուսակ 8. Համայնքի հողային հաշվեկշիռը

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնքում	ՀՀ քաղաքացի ների	ՀՀ իրավաբանա կան անձանց	Համայնքա յին	Պետական
1.	Համայնքի վարչական տարածքը (հա), որից՝	1588.31	1086.37	0.02	390.75	111.17
2.	Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա), այդ թվում՝	1294.63	969.97	0	324.66	0
	Արոտավայր	193.41	0	0	193.41	0
	Վարելահողեր	1071.56	969.97	0	101.59	0
	Խոտհարք	0	0	0	0	0
	Պտղատու այգի	0	0	0	0	0
0	Այլ հողեր	29.66	0	0	29.66	0
3.	Բնակավայրերի հողեր (հա), որից՝	160.57	116.33	0	41.88	2.36
	Բնակելի կառուցապատման	116.31	116.31	0	0	0
	Հասարակական կառուցապատման	3.67	0	1.31	2.36	0
	Խառը կառուցապատման	0	0	0	0	0
	Ընդհանուր օգտագործման	20.27	0	0	20.27	0
	Այլ հողեր	20.32	0.02	0	20.30	0
4.	Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր (հա)	17.83	0	0	15.78	2.05
5.	Էներգետիկայի տրանսպորտի և կապի, կոմունալ ենթակայության հողեր (հա)	3.45	0.07	0.02	0.02	3.34
6.	Անտառային հողեր (հա)	0	0	0	0	0
7.	Հատուկ պահպանության հողեր (հա)	5.30	0	0	2.16	3.14
8.	Հատուկ նշանակության հողեր (հա)	93.99	0	0	0	93.99
9.	Զբային հողեր (հա)	12.54	0	0	6.25	6.29

1.9 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ:

Համայնքի սեփականաշնորհված և վարձակալությամբ տրված վարելահողերում հիմնականում ցանվում են հացահատիկային մշակաբույսեր՝ ցորեն, գարի, կերային մշակաբույսեր, կարտոֆիլ, կաղամբ, բանջարաբոստանային և այլ կուլտուրաներ: Համայնքաբնակները իրենց տնամերձ հաղամասերում աճեցնում են նաև բազմատեսակ պտուղներ: Վերջին տարիներին համայնքի որոշ տնտեսություններ սկսել են մշակել նաև այլ մշակաբույսեր՝ մասնավորապես կտավատ, վարսակ, բրոկոլի, հնդկացորեն:

Արտադրության արդյունավետությունը կախված է բնակլիմայական բարենպաստ պայմաններից: Ցանքատարածությունները վտանգված են երաշտով և կարկտահարությամբ: Համայնքի տարածքում տեղակայված երեք հակակարկտային կայանները բավականաչափ նվազեցնում են վերահաս կարկուտի պատճառելիք վնասները, սակայն որոշ տարածք մնում է բաց և անհաժեշտ է տեղադրել ևս մեկ կայան:

Համայնք ունի ոռոգման համակարգ, սակայն ցանցը ունի վերանորոգման կարիք, ոռոգման ցանցի որոշ մասն էլ հողային առուներ են, ուստի անխուսափելի են ջրային կորուստները: Համայնքի ոռոգելի տարածքի մի մասը չի ոռոգվում ցանցի բացակայության պատճառով: Այդ ինչպես նաև հողերի մեծ մասի ջրովի չլինելու պատճառով համայնքաբնակները մեծ եկամուտներ չեն ստանում:

Բնակիչները զբաղվում են նաև անասնապահությամբ, սակայն խոշոր ֆերմերային տնտեսությունները սակավաթիվ են: Հիմնականում յուրաքանչյուր տնտեսություն իր արտադրանքը սպառում է իր տնտեսության ներսում:

Հացահատիկային կուլտուրաների միջին բերքատվությունը կազմում է 30.7 և 29.5 ցենտներ, կերային մշակաբույսերինը՝ 38 ցենտներ: Յուրաքանչյուր տարի համայնքում միջին հաշվարկով արտադրվում է 586 տոննա ցորեն, 569 տոննա գարի, 1332 տոննա կարտոֆիլ, 255 տոննա կաղամբ և ծաղկակաղամբ 927000 լիտր կաթ, 50000 կգ միս:

Չնայած այն հանգամանքին, որ հողագործությունը և անասնապահությունը հանդիսանում են Հայկավաի համայնքի տնտեսական զարգացման կանխորոշող ոլորտ, սակայն այս երկու ոլորտները ներկայումս ունեն միջին զարգացվածության տեմպ, որը պայմանավորված է ոլորտների ցածր մեխանիզացման աստիճանով ու վերամշակման տեխնոլոգիաների բացակայությամբ:

Գյուղում չկան կաթնամթերքի և պտուղ-բանջարեղենի վերամշակմամբ զբաղվող կազմակերպություններ:

Աղյուսակ 9-ում ներկայացված են համայնքում առկա անասնազրկաքանակի վերաբերյալ ցուցանիշներն՝ ըստ 2016 թվականի հունվարի 1-ի հաշվառման արդյունքների:

Հ/հ	Ցուցանիշները	
1.	Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, որից՝	1567
	Կովեր	629
2.	Խոզերի գլխաքանակը	136
3.	Ոչխարների և այծերի գլխաքանակը	1075
4.	Ավանակների և ջորիների գլխաքանակը	0
5.	Ձիերի գլխաքանակը	4
6.	Հավերի և այլ թռչունների գլխաքանակը	3439
7.	Մեղվաբնտանիքների քանակը	354

1.10 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բնության և շրջակա միջավայրի պահպանությունը մարդու նորմալ կենսագործունեության ամենաանհրաժեշտ գործոնն է, ուստի համայնքի առջև ծառացած կարևորագույն խնդիրներից մեկը համայնքի սանմաքրումն է:

Համայնքի նորակառույց թաղամասում առկա է կոյուղագիծ ,սակայն դա կազմում է տնտեսությունների միայն 11.7 %-ը , մյուս բնակելի թաղամասերում դեռևս չկա ջրահեռացման համակարգ, որի պատճառով մարդիկ օգտագործում են տնամերձ հողամասերում կառուցված կոյուղահորերը:

Աղբահանումն իրականացվում է բնակիչների կողմից, ոչ բավարար պայմաններում: Բենիամին գյուղի տարածքում կառուցվող աղբավայրի շահագործումից հետո համայնքում աղբահանությունը կիրականացվի կենտրոնացված ձևով,որը գյուղը կդարձնի ավելի բարեկարգ և մաքուր:

Համայնքում բնության և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- ավելացնել համայնքի կանաչապատ և ծաղկապատ տարածքները,
- կազմակերպել կենտրոնացված աղբահանություն,փողոցներում տեղադրել աղբամաններ,
- կենդանիների մորթը կատարել սպանդանոցներում՝ թույլատրված սանիտարահիգիենիկ նորմերը պահպանելու համար ,

- ներգրավել համայնքի բնակչությանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում՝ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ պարբերաբար անցկացվող սեմինարների, դասընթացների, տեսագովազդների, ցուցանակների և հանրային իրազեկման այլ միջոցներով:

1.11 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հայկական համայնքում առկա են նաև ճանապարհային տնտեսության հետ կապված խնդիրներ: Համայնքի ոչ բոլոր ճանապարհներն են ասֆալտապատ և բարեկարգ : Ներհամայնքային ճանապարհների ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 30 կմ,որից ավելի քան 6.0 կմ-ը ասֆալտապատ է,իսկ մնացածը մասը հիմնականում ավազախճային ծածկույթով է :

Ներհամայնքային ճանապարհները, լինելով թեքությունների վրա, տեղացող հորդառատ անձրևների պատճառով հաճախակի քայքայվում են և որոշ տեղերում դառնում դժվար անցանելի:

Յուրաքանչյուր տարի, համայնքի միջոցների հաշվին, կատարվում են ներհամայնքային ճանապարհների փոսալցման և բարեկարգման աշխատանքներ ճանապարհներն անցանելի վիճակում պահելու համար:Ապահովվում է նաև ճանապարհների բավարար անցանելիությունը ձմռան ամիսներին:

Դաշտամիջյան ճանապարհները գրունտային են,վերջիններս ևս կարևոր նշանակություն ունեն համայնքի համար և պարբերաբար ենթարկվում են բարեկարգման:

Վերջին անգամ դաշտամիջյան ճանապարհները բարեկարգվել են 2016թվականին՝ համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

Համայնքն ունի ներհամայնքային ավտոմոբիլային մեկ քարե կամուրջ և մեկ երկաթբետոնյա կամուրջ :Ներհամայնքային կամուրջներն հիմնովին վերանորոգվել են 2009 թվականին և բարվոք վիճակում են:

Համայնքում տեղադրված են թվով երեք կանգառային կետեր , անհրաժեշտ է տեղադրել ևս երկուսը :Ցանկալի է ,որ դրանք լինեն բազմաֆունկցիոնալ կանգառներ՝ներառյալ ինֆորմացիոն վահանակներ, համայնքում մատուցվող ծառայությունների և այլնի մասին, ցուցանակներով:

Համայնքի տարածքով անցնում է Գյումրի-Ողջի-Արեգնադեմ-Ամասիա ճանապարհը , որի հիմնական մասը՝ 13կմ, վերանորոգվել է 2009 թվականին,ասֆալտապատ է և գտնվում է բարվոք վիճակում:

Համայնքի հիմնական տրանսպորտային երթուղին է Հայկական-Գյումրին, որի ներկայիս տրանսպորտային սպասարկումը բավարարում է բնակիչների պահանջները:Ուղևորափոխադրումները իրականացվում են միկրոավտոբուսներով, ժամում մեկ անգամ,փոխադրավարձը կազմում է 150.0 դրամ:

Համայնքի և բնակիչների սեփականություն համդիսացող տրանսպորտային միջոցների և գյուղտնիսնիկայի վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնքում
1.	Մարդատար ավտոմեքենաներ	159
2.	Բեռնատար ավտոմեքենաներ	33
3.	Ավտոբուսներ	3
4.	Միկրոավտոբուսներ	2
5.	Կոմբայններ	4
6.	Վարի տրակտորներ, որից՝	18
	Թրթուրավոր	8
	Անվավոր	10
7.	Կցասայլ	9
8.	Մղան	1

1.12 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայկական համայնքում առևտուրն իրականացվում է անհատ ձեռնարկատերերի կողմից, մանրածախ առևտրի երկու կետերում:

Համայնքում տարածքում գործող արտադրական և այլ ծառայություններ մատուցող կազմակերպություններ, հանրային սննդի սպասարկման օբյեկտներ, հյուրանոցներ, հյուրատներ, բացօթյա տեղական մթերքների շուկա չկա: Չկան գործող ոչ կառավարական կազմակերպություններ (ՀԿ-ներ, հիմնադրամներ, քաղաքական կուսակցություններ և այլն):

1.13 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակչության կրթամակարդակը բավականին բարձր է, բնակիչների ավելի քան 35%-ը ունի միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն :

Համայնքն ունի հանրակրթական մեկ դպրոց, որտեղ սովորում են 138 աշակերտներ, աշխատում են 20 մանկավարժ և 9 սպասարկող անձնակազմ: Դպրոցը կառուցվել է 2003 թվականին՝ Հայաստանի Սոցիալական ներդրումների հիմնադրամի և « Վարդանանց ասպետներ» կազմակերպության միջոցներով : Դպրոցը նախատեսված է 220 աշակերտ/տեղի համար: Դպրոցը մշտապես գտնվում է համայնքի ղեկավարի ուշադրության կենտրոնում: Համայնքապետարանի կողմից իրականացվում են մի շարք ծրագրեր՝

խթանելու կրթության մակարդակի բարելավումը, օժանդակելու կրթօջախի առջև ծառացած խնդիրների լուծմանը, բարելավելու ինչպես շենքային, այնպես էլ գույքային պայմանները:

Համայնքն ունի մանկապարտեզի երկու շենք ,որոնցից մեկը գտնվում է նոր գյուղատեղում և առայժմ չի շահագործվում:

Մանկապարտեզի մյուս շենքը երկհարկանի է ,քարային,մոտ 550 քառ.մ մակերեսով, նախատեսված է 100 երեխայի համար: 2011 թվականին հանրապետական բյուջեի միջոցներով հիմնանորոգվել է և այժմ պատրաստվում է շահագործման : Նախորդ երկու տարիներին իրականացվել է մանկապարտեզի գույքվորում :

2014թ-ին պետական բյուջեի միջոցներով ձեռք է բերվել խոհանոցային գույք, Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից որպես նվիրատվություն հատկացվել են մահճակալներ,սեղան- աթոռներ,պահարաններ , գրասեղաններ : 2015թ.-ին «Կամբջակ»ՍԲՀԿ-ի նվիրատվությամբ ձեռք են բերվել անկողնային պարագաներ: Ընթացիկ տարում «Կանաչ էներգիա» ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել և տեղադրվել արևային տաք ջրամատակարարման համակարգ:

Մանկապարտեզը նախատեսվում է վերջնական շահագործել 2017 թվականից ինչը թույլ կտա ապահովել համայնքում նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և հայեցի դաստիարակության կազմակերպումը:

Այս պահին մանկապարտեզի վերջնական շահագործմանը խոչընդոտող միակ պատճառը համայնքում գազաֆիկացման բացակայությունն է,որի լուծումը ևս նախատեսվում է համայնքի տեսլականում:

1.14 ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հայկական համայնքն այնքան էլ հարուստ չէ մշակութային օջախներով:Ունի պատմամշակութային մի շարք արժեքներ,հուշարձան-համալիր`նվիրված Հայրենական Մեծ պատերազմի զոհերի հիշատակին,խաչքարեր`նվիրված Մեծ Եղեռնի, երկրաշարժի անմեղ զոհերի և տարբեր պատերազմներում անհայտ կորած մեր հայրենակիցների հիշատակին:Համայնքի տարածքում առկա է 5.3 հա դամբարանադաշտ:

2008 թվականին նախկին համագյուղացիներ`բարերարներ Աբրահամ և Սպարտակ Խաչատրյանների կողմից կառուցվել և նույն թվականի նոյեմբերի 15-ին օծվել է համայնքի «Սուրբ Խաչ Ավետարան» եկեղեցին: Եկեղեցու կառուցմամբ նոր շրջան է բացվել համայնքի հոգևոր կյանքում,քանզի կրոնը ,որպես բարոյական նորմեր և վարքագծի կանոններ պարունակող պատկերացումների համախումբ ու հասարակական գիտակցության ձև,կարևոր նշանակություն ունի մարդու հոգեկերտվածքի ձևավորման գործընթացում :

Համայնքն ունի մշակույթի տան շենք,որը կառուցվել է 1970 թվականին ,խիստ վնասվել է 1988 թվականի երկրաշարժի ժամանակ և մինչև օրս հիմնական վերանորոգման չի ենթարկվել : Այժմ այն վերապրոֆիլավորվել է որպես համայնքային կենտրոնի շենք,կարիք ունի հիմնանորոգման և գույքավորման :

2004 թվականին ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվիրատվությամբ կազմվել են հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերը, սակայն ֆինանսական միջոցների անբավարարության պատճառով աշխատանքներ այդպես էլ չեն իրականացվել : Կատարվել է միայն խաղասենյակի մասնակի վերանորոգում՝ համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

Համայնքի մշակույթի տան շենքում է տեղակայված գյուղական գրադարանը, որն ունի մոտ 5900 կտոր գիրք, գրադարան գործում է նաև դպրոցում:

Ցավոք, համայնքաբնակների կողմից առկա է գրքի հանդեպ ուշադրության և հետաքրքրվածության պակաս:

Համայնքում չկան երեխաների արտադպրոցական գեղագիտական դաստիարակությանը, նրանց ունակությունների, կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը նպաստող հիմնարկներ, ինտելեկտուալ ,Ժամանցային սպասարկման ծառայություններ մատուցող կենտրոններ, ուստի շատ կարևոր է անհրաժեշտ ռեսուրսների ներդրման միջոցով զարգացնել համայնքի մշակութային և ժամանցային առօրյան :

1.15 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՄՊՈՐՏ

Համայնքի վարչական տարածքում գործող միակ առողջապահական հիմնարկը բուժման կաբարձական կետն է, որը սպասարկում են երկու բուժքույր, այնտեղ հիմնականում իրականացվում են առաջին բուժօգնության ծառայություններ : Տեղի ունեցող հիմնական դեպքերի ժամանակ շտապ օգնությունը հասնում է Գյումրի քաղաքից :

Բուժկետը չունի բավարար շենքային պայմաններ, համապատասխան գույք և սարքավորումներ, գործում է փայտե վագոն-տնակում: Չնայած դրան՝ համայնքապետարանի կողմից անընդմեջ աջակցություն և վերահսկողություն է իրականացվում, որպեսզի պատշաճ մակարդակով կազմակերպվի համայնքի բնակչության բժշկական սպասարկումը: 2005 թվականին <<Նովա>> ծրագրով ,իսկ 2012 թվականին համայնքի բյուջեի միջոցներով բուժման կաբարձական կետը ենթարկվել է վերանորոգման:

Համայնքն ունի ֆուտբոլի մարզադաշտ, որը սակայն գտնվում է քայքայված, կիսաքանդված և անբարեկարգ վիճակում:

Ներկայումս համայնքի խնդիրներից մեկը դպրոցի մարզադահլիճ ունենալն է, որը կնպաստի համայնքում երեխաների ֆիզիկական դաստիարակության, առողջ ապրելակերպի ամրապնդմանը:

Քայլեր են ձեռնարկվում նաև հմայնքում տարաբնույթ սպորտային խմբակներ կազմակերպելու ուղղությամբ:

1.16 ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքը չունի գործող համայնքային կենտրոն , զբոսայգիներ, խաղահրապարակներ , մարզահրապարակներ, որի հետևանքով երիտասարդությունը զրկվում է իր ակտիվ հանգիստը կազմակերպելու հնարավորությունից:

Հանգստի գոտիների, մշակութային հիմնարկների առկայությունը խթան կհանդիսանար համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, կրթական, գեղագիտական դաստիարակության զարգացման գործում:

Շատ կարևոր է նաև մանկապարտեզի բակում խաղահրապարակի կառուցումը, որը թույլ կտա կազմակերպել մանկահասակ երեխաների ակտիվ հանգիստը քաղաքակիրթ պայմաններում:

Թեև հիմնախնդիրների լուծումը առաջնահերթ է, սակայն միայն համայնքի բյուջեի միջոցների հաշվին նմանատիպ ծրագրերի իրագործումը անհնար է:

1.17 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքի աշխատունակ բնակչության գերակշիռ մեծամասնությունը՝ 1125 մարդ , ներգրավված է գյուղատնտեսական ինքնագրավածության ոլորտում: Ոչ գյուղատնտեսական, վարձու ոլորտում աշխատողների թիվը՝ 51 է : Համայնքի տարածքում չկան գործող գործարաններ կամ արտադրամասեր, ուստի բնակչության աշխատանքի տեղավորվելու և աշխատելու հույսը մնում է միայն համայնքապետարանում, դպրոցում, երիտասարդների համար՝ մոտակա գորամասերում պայմանագրային հիմունքներով աշխատատեղերում աշխատելու հնարավորությունը:

Աշխատատեղերի պակասը և սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանները խթանում են բնակչության արտագնա աշխատանքի մեկնելու անհրաժեշտությունը: Համայնքի շուրջ 97 տնտեսությունից, մոտ 120 հոգի ամեն տարի մեկնում է արտագնա աշխատանքի:

Բնակիչների եկամուտների հիմնական աղբյուրը թոշակներն ու նպաստներն են: Ընտանեկան նպաստի համակարգից օգտվում են համայնքի 46 ընտանիքներ :

Այս հիմնախնդիրների հաղթահարման հիմնական ճանապարհը աշխատատեղերի ստեղծումն է, քանզի համայնքն ունի մեծ աշխատուժ, մտավոր և ֆիզիկական զգալի պոտենցիալ, որն էլ հույս է ներշնչում լավատեսորեն նայելու վաղվա օրվան:

Համայնքապետարանը իր հնարավորությունների շրջանակներում օգնություն է ցուցաբերում սոցիալապես անապահով ընտանիքներին , ծնողազուրկ, հաշմանդամ և սոցիալապես շատ ծանր վիճակում գտնվող երեխաները մշտապես գտնվում են համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի ուշադրության կենտրոնում :

1.18 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքապետարանը ունի իր պաշտոնական վեբ կայքը՝ www.haykavan.am, որի նպատակը բնակչությանը համայնքի կառավարման վերաբերյալ իրազեկումն է, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ամրագրված հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, տեղական իշխանություն-բնակչություն կապի ամրապնդումը և բնակչության շրջանում տեղական իշխանության նկատմամբ վստահության բարձրացումը: Սակայն, կայքում տեղական ինքնակառավարման վերաբերյալ տեղեկատվության առկայությունը բավարար չէ և անհրաժեշտ է մշտապես բարելավել կայքի աշխատանքը, բարձրացնել օպերատիվությունը:

Համայնքապետարանում տեղադրված են տեղեկատվական ցուցատախտակներ, որոնց միջոցով ապահովվում է համայնքի ղեկավարի և ավագանու կայացրած որոշումների հրապարակայնությունը:

Համայնքի ավագանին.

- ✓ 04.05.2016թ. N 11-Ն որոշմամբ հաստատել է «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը»
- ✓ 04.05.2016թ. N 12-Ն որոշմամբ հաստատել է «Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը»
- ✓ 04.05.2016թ. N13-Ն որոշմամբ հաստատել է «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը»:
- ✓ 14.11.2016թ. N 43-Ա որոշմամբ հաստատել է համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման, քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտային հարցերի, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության և սպորտի հարցերով խորհրդակցական մարմինների անհատական կազմերը :

1.19 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, կառավարումը հանդիսանում է համայնքային իշխանության կողմից պարտադիր կատարվող գործառույթ: Համայնքային ենթակառուցվածքների ներգրավմանը զուգահեռ, քաղպաշտպանության շտաբի մեջ ներառված ծառայությունները ներկայացնում են համայնքային այլ պատկանելիության, մասնավոր հատվածի մի շարք կազմակերպություններ (կապի, տրանսպորտի, բժշկական, և այլ ոլորտներից), առանց որոնց անհնար է քաղպաշտպանության շտաբի ֆունկցիոնալ գործունեության արդյունավետ ապահովումը:

Հայկականի համայնքի քաղպաշտպանության շտաբի պետն համարվում է համայնքի ղեկավարի տեղակալը, որի անմիջական հանձնարարությամբ գործում են քաղպաշտպանության շտաբի առանձին ծառայությունները՝ ծառայությունների պետերի համակարգմամբ:

Արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքների իրականացման գործում բնակչության տարահանման համար մշակված է պլան: Համայնքում որպես թաքստոցներ ծառայում են նկուղները, որոնք հաշվառված են համայնքապետարանի կողմից:

1.20 ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Համայնքի գործարար միջավայրը սահմանափակվում է համայնքում գործող ԱԶ-ների առևտրի երկու մանր կետերի գործունեությամբ, ուստի համայնքում բիզնեսի վիճակն առանձնապես բարվոք համարել չի կարելի:

Համայնքի գործարար միջավայրի ձևավորումն ապահովող և հետագայում այդ միջավայրը զարգացնող կազմակերպությունների անհրաժեշտությունը համայնքի համար առաջնային է: Մասնավոր ներդրումները ,տեղական արտադրության կազմակերպումը, կարող են լուրջ խթան հանդիսանալ համայնքի սոցիալ տնտեսական զարգացման համար, որոշ չափով կլուծվի նաև բնակչության զբաղվածության հարցը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի իրավիճակի վերլուծության արդյունքում վեր են հանվել մի շարք հիմնահարցեր, որոնք ամփոփ կերպով ներկայացված են ստորև.

- ✓ Համայնքի գազիֆիկացման ծրագրի շարունակություն և վերջնական շահագործում :
- ✓ Խմելու ջրի ցանցերի հիմնանորոգման անհրաժեշտություն :
- ✓ Ոռոգման ցանցի վերանորոգման և նոր ցանցի կառուցման անհրաժեշտություն :
- ✓ Համայնքային կենտրոնի հիմնանորոգում:
- ✓ Գերեզմանատան պարսպի կառուցապատում և տարածքի բարեկարգում :
- ✓ Դպրոցի մարզադահլիճի բացակայություն:
- ✓ Աղբահանության ոլորտում կենտրոնացված ծառայությունների կազմակերպման անհրաժեշտություն :
- ✓ Ներհամայնքային ճանապարհների վերանորոգման և փողոցների գիշերային լուսավորվածության ընդլայնման անհրաժեշտություն :
- ✓ Բուժման կաբարձական կետի շենքային և գույքային բավարար պայմանների ապահովում:
- ✓ Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների շտաբի առանձնացված սենյակի և վերջինիս գույքով համալրման անհրաժեշտություն :
- ✓ Համայնքում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման անհրաժեշտություն :
- ✓ Դաշտավարության բնագավառում՝ ժամանակակից գյուղտեխնիկայի ձեռքբերման , գյուղմթերքների վերամշակման և իրացման համար նոր շուկաների անհրաժեշտություն
- ✓ Ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ համայնքի երեխաների և երիտասարդների գիտելիքների բարձրացման անհրաժեշտություն
- ✓ Կանաչապատ և ծաղկապատ տարածքների ավելացման, զբոսայգու անհրաժեշտություն:
- ✓ Համայնքի խնդիրների լուծման գործընթացում բնակչության ներգրավվածության մակարդակի բարձրացում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹՀՍ-ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի ուժեղ կողմերն են՝

- ✓ բարձրագույն և միջին մասնագիտական կրթությամբ մասնագետների առկայությունը
- ✓ որակյալ աշխատուժի բավարար քանակը
- ✓ բարենպաստ դիրքը և գյուղը մարզկենտրոնին և մոտակա քաղաքներին կապող ճանապարհի բարվոք վիճակը
- ✓ համայնքի ղեկավարի երկարամյա փորձը և ազգաբնակչության վստահությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի թույլ կողմերն են՝

- ✓ արտադրական կազմակերպությունների բացակայությունը, գործազրկության բարձր մակարդակը և աշխատատեղերի պակասը
- ✓ համայնքի ենթակառուցվածքների (փողոցներ, ջրամատակարարման ցանցեր, և այլն) ոչ բարվոք վիճակը
- ✓ ազգաբնակչության անվճարունակությունը, սոցիալ-տնտեսական պայմանների ցածր մակարդակը.
- ✓ գազաֆիկացման բացակայությունը:
- ✓ համայնքապետարանի վարչական շենքի բացակայությունը
- ✓ համայնքային կենտրոնի հիմնանորոգման անհրաժեշտությունը
- ✓ մշակութային և սպորտային հիմնարկների բացակայությունը
- ✓ գյուղտեխնիկայի բարոյական և ֆիզիկական մաշվածությունը
- ✓ գյուղմթերքների իրացման խնդիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի զարգացման հնարավորություններն են՝

- ✓ Անասնապահության և դաշտավարության զարգացումը
- ✓ Գյուղմթերքների արտադրության ծավալի մեծացումը և վերամշակման փոքր արտադրությունների կազմակերպումը
- ✓ Տեղացի և սփյուռքահայ ներդրողների համար փոքր և միջին բիզնեսի կազմակերպման համար բարենպաստ քաղաքականության դրսևորումը և հնարավորությունների ստեղծումը (հիմնական նպատակը համայնքաբնակների համար աշխատատեղերի ստեղծում)

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՅՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝

- ✓ Բնական տարերային աղետների հնարավոր պատճառած վնասները (երկրաշարժ, հեղեղումներ, կարկտահարություն, ցրտահարություն,սողանքների առաջացում)
- ✓ Գործազրկության մակարդակի աճը
- ✓ Արտագաղթը, հատկապես երիտասարդների շրջանում

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶՀԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի տեսլականն է՝

Հայկականը բնակչությանը որակյալ ծառայություններ մատուցող և սոցիալ – տնտեսական բնականոն զարգացում ապահովող ,բարեկարգ համայնք է, որտեղ զարգացած են գյուղատնտեսությունը և վերամշակող արտադրությունը , ստեղծված է ներդրումների համար մրցունակ միջավայր, իսկ բնակիչներն ապրում են բարեկեցիկ կյանքով:

Նշված տեսլականին հասնելու համար համայնքը որդեգրել է հետևյալ ռազմավարությունը՝

- ✓ Համայնքի սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների բարձրացմամբ տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը :
- ✓ Համայնքի միջոցներով,նաև դոնոր կազմակերպությունների,անհատների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների նախաձեռնությամբ հետևողականորեն բարեփոխումներ անցկացնել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական մշակութային և հանգստի պայմաններում :
- ✓ Նպաստել համայնքում աշխատատեղերի ընդլայնմանը՝ ռացիոնալ օգտագործելով բնական ռեսուրսները, զարգացնելով առևտրի և սպասարկման ոլորտն ու գյուղատնտեսությունը
- ✓ Բարձրացնել բնակչության կենսամակարդակը գյուղը դարձնել զարգացած ,գեղեցիկ, բարեկարգ և կանգնեցնել արտագաղթը:

Համայնքի զարգացման 2017-2021թթ. հնգամյա ծրագրի հիմնական **նպատակներն** են՝

- ✓ Խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում :
- ✓ Համայնքի գազաֆիկացման ծրագրի շարունակում և վերջնական շահագործում :
- ✓ Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում,լուսավորության ավելացում և երկու գյուղատեղերը կապող ճանապարհի կառուցում(ավագամանրաքարային)
- ✓ Համայնքային կենտրոնի հիմնանորոգում, ամրացում և համայնքի մշակութային կյանքի ակտիվացում:
- ✓ Ոռոգման համակարգի վերանորոգում և ոռոգման ջրի պաշարների արդյունավետ օգտագործում
- ✓ Գերեզմանատան տարածքի պարսպի կառուցապատում
- ✓ Կանգառային տաղավարների կառուցում և տեղադրում
- ✓ Մանկապարտեզի տարածքի բարեկարգում և խաղերի տեղադրում
- ✓ Գյուղատնտեսության զարգացում

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻԶՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Հայկավանում գալիք 2017-2021թթ. ընթացքում նախատեսվում է սերտորեն համագործակցել պետության, միջազգային կազմակերպությունների, մասնավոր սեկտորի և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով համայնքը նախատեսում է համագործակցել ՀՀ Շիրակի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ՝ մասնավորապես հետևյալ ծրագրերի իրականացման նպատակով:

Համայնքում գյուղատնտեսության զարգացում, ինչը ենթադրում է, օրինակ պարարտանյութերի, սերմացուների տրամադրում, գյուղմթերքների իրացման, գյուղտեխնիկայի ձեռքբերման հնարավորությունների ստեղծում, խորհրդատվության տրամադրում և այլ միջոցառումներ:

Պետական պատվերի շրջանակներում կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում:

Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

Համայնքի գազաֆիկացման ծրագրի շարունակություն և վերջնական շահագործում:

Պլանավորվող հինգ տարիների ընթացքում նախատեսվում է շարունակել համագործակցությունը ՀՀ Շիրակի մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների հետ:

Օրինակ .Շիրակի մարզի ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերի վերականգնման նպատակով գերմանական KFW բանկի վարկային ծրագրի 3-րդ փուլի շրջանակներում «Հայկական գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» ծրագիրը:

Միջհամայնքային համագործակցության շրջանակներում նախատեսվում է հետևյալ ծրագրի իրականացումը.

Ոսկեհասկ համայնքի հետ, որը հարևան մեծ համայնքներից է, միջհամայնքային ճանապարհի վերանորոգում և բարեկարգում՝ տրանսպորտային հաղորդակցության բավարար պայմանների ապահովման համար:

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը (2015թ.՝ 69.84%, 2016թ.՝ 70.67%, 2017թ.՝ 70.99%, 2018թ.՝ 70.93%, 2019թ.՝ 71.02%, 2020թ.՝ 70.97%, 2021թ.՝ 70.98 %) ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին (աղյուսակ 11):

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր չեն կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին:

Աղյուսակ 11. Համայնքի 2015-2016թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

		հազար դրամ						
Հ/հ	Մուտքերի անվանումը	2015թ. փաստ.	2016թ. փաստ.	2017թ. նախ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	45642.4	51055.1	32886.6	32916.6	33089.4	33199.4	33389.4
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*	31351.5	33035.5	32886.6	32916.6	33089.4	33199.4	33389.4
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	7951.4	8186.8	8037.9	8067.9	8087.9	8137.9	8187.9
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	5727.8	5719.3	5737.9	5737.9	5737.9	5737.9	5737.9
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	0.9	0.9	0.9	0.9	0.9	0.9	0.9
	Հողի հարկ	5726.9	5718.4	5737.0	5737.0	5737.0	5737.0	5737.0
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	2173.6	2267.5	2250.0	2280.0	2300.0	2350.0	2400.0
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	2173.6	2267.5	2250.0	2280.0	2300.0	2350.0	2400.0
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	50.0	200.0	50.0	50.0	50.0	50.0	50.0
	Տեղական տուրքեր	50.0	200.0	50.0	50.0	50.0	50.0	50.0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ							
	Պետական տուրքեր							
1.5	Այլ հարկային եկամուտներ							
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ							

	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ							
2	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	21898.6	23347.2	23347.2	23347.2	23500.0	23560.0	23700.0
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	21898.6	23347.2	23347.2	23347.2	23500.0	23560.0	23700.0
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	21898.6	23347.2	23347.2	23347.2	23500.0	23560.0	23700.0
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ							
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)							
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
2.4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ							
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)							
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
3	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	1501.5	1501.5	1501.5	1501.5	1501.5	1501.5	1501.5
3.1	Տոկոսներ							
3.2	Շահաբաժիններ							
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	1491.5	1491.5	1491.5	1491.5	1491.5	1491.5	1491.5
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	1451.5	1451.5	1451.5	1451.5	1451.5	1451.5	1451.5
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ							
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի							

	դիմաց գանձվող վարձավճարներ							
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	40.0	40.0	40.0	40.0	40.0	40.0	40.0
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում							
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ							
3.5	Վարչական գանձումներ	10.0	10.0	10.0	10.0	10.0	10.0	10.0
	Տեղական վճարներ	10.0	10.0	10.0	10.0	10.0	10.0	10.0
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ							
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ							
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից							
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ							
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից							
3.7	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ							
3.8	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ							
3.9	Այլ եկամուտներ*							
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր							
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր							

	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ							
II.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
1	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր							
	Շարժական գույքի իրացումից մուտքեր							
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր							
2	Պաշարների իրացումից մուտքեր							
3	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր							
4	Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Հողի իրացումից մուտքեր							
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							
III.	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)	14290.9	18019.6					
Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)	14290.9	18019.6					
1	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ							
1.1	Արժեթղթեր							
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր							
	-հիմնական գումարի մարում							
1.2	Վարկեր							
	-վարկերի ստացում							
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում							
1.3	Փոխատվություններ							
	-բյուջետային փոխատվությունների ստացում							
	-ստացված փոխատվությունների գումարի մարում							
2	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	14290.9	18019.6					
2.1	Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն							
	-համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր							
	-իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների							

	մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր							
	-բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում							
2.2	Փոխատվություններ							
	-նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր							
	-փոխատվությունների տրամադրում							
2.3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը	14290.9	18019.6					
2.4	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս							
2.5	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս							
2.6	Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում							
	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը							
Բ.	ԱՐՏԱՔԻՆ ԱՂՔՑՈՒՐՆԵՐ							
1	ՓՈՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ							
1.1	Արժեթղթեր							
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր							
	-հիմնական գումարի մարում							
1.2	Վարկեր							
	-վարկերի ստացում							
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում							
1.3	Փոխատվություններ							
	-փոխատվությունների ստացում							
	-ստացված փոխատվությունների գումարի մարում							

**5. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ
ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ
ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՍՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ**

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայումս արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման՝ ՏԻՄ-ի կողմից ընտրված ռազմավարությունից և առաջիկա հինգ տարիների համար սահմանված հիմնական նպատակներից, ՀԶԾ-ի կառավարման ԽՄ-ի կողմից քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը : Այդ ծրագրերի մի մասի իրականացումը համարվում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություն, իսկ մյուս մասը դուրս է վերջիններիս լիազորությունների շրջանակից, սակայն դրանց իրականացումը խիստ կարևոր նշանակություն ունի բնակչության բարեկեցությունը և համայնքի համալիր ու առաջանցիկ զարգացումը ապահովելու համար:

Ծրագրերի առաջնահերթությունների որոշում

Ծրագրերի ցանկը սահմանվել է և դրանք գնահատվել են ըստ առաջնահերթության՝ հիմք ընդունելով հետևյալ չափորոշիչները.

- ✓ Շահառուների թիվ
- ✓ Համայնքի կարողությունների հզորացում
- ✓ Իրատեսականություն
- ✓ Հրատապություն

Ընդ որում, ծրագրերն ի սկզբանե առանձնացվել և ներկայացվել են ըստ հետևյալ խմբերի՝

- ✓ Պարտադիր իրականացվող ծրագրերի ցանկ
- ✓ Առկա համագործակցության շրջանակներում իրականացվող և ընթացքի մեջ գտնվող ծրագրերի ցանկ
- ✓ Համայնքի՝ առաջնահերթ իրականացում պահանջող ոլորտային ծրագրերի ցանկ

Պարտադիր իրականացվող ծրագրերն ի սկզբանե դիտարկվել են որպես առաջնահերթ և պարտադիր կատարման ենթակա: Դրանք ձևակերպվելու են համայնքի տարեկան բյուջեների շրջանակում համապատասխան ծախսային նախահաշիվներով: Այս մոտեցումը ցուցաբերվել է ելնելով այն տրամաբանությունից, որ անկախ համայնքի որևէ ծրագրի իրականացման կարևորությունից, համայնքում պետք է գործի աշխատակազմ, բացի այդ, նախատեսվել է ,որ համայնքում գործելու է նախադպրոցական ուսումնական հաստատություն(ՆՈՒՀ)՝ մանկապարտեզ, հետևաբար վերջիններիս պահպանության հետ կապված ծրագրերը նույնպես դիտարկվել են որպես առաջնահերթ:

Համայնքում պարտադիր իրականացվող ծրագրերի ցանկում են նաև բնակչությանը սոցիալական օգնության տրամադրումը , ծառայությունների և ապրանքների ձեռքբերումը :

Պարտադիր իրականացվող ծրագրերի ցանկը ներկայացված է աղյուսակ 12-ում:

Առկա համագործակցության շրջանակներում իրականացվող և ընթացքի մեջ գտնվող ծրագրերից է Շիրակի մարզի ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերի վերականգնման նպատակով գերմանական KFW բանկի վարկային ծրագրի 3-րդ փուլի շրջանակներում «Հայկական գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» ծրագիրը:

Այն արդեն ընտրված և պլանավորված է եղել նախքան ՀԶՀԾ-ի մշակումը:

Համայնքի՝ առաջնահերթ իրականացում պահանջող ոլորտային ծրագրերի ցանկը գնահատվել և սահմանվել է առանձին՝ ըստ չափորոշիչների:

Ներկայացվել են յուրաքանչյուր ծրագրի իրականացման համար գալիք 5 տարվա կանխատեսումների շրջանակներում անցկացվելիք միջոցառումները և բաժին հասնող ֆինանսական միջոցները: Այսինքն հաշվարկվել է համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների չափը, որը նախատեսվում է ծախսել պլանավորվող ծրագրերի շրջանակներում ամբողջովին կամ հատկացվող համաֆինանսավորման տեսքով, նաև դրամաշնորհների, բարեգործության, դոնոր կազմակերպություններից և այլ աղբյուրներից ակնկալվող ֆինանսավորման չափը:

Համայնքի՝ առաջնահերթ իրականացում պահանջող ոլորտային ծրագրերի ցանկը ներկայացված է աղյուսակ 13-ում:

Համայնքի՝ առաջնահերթ իրականացում պահանջող ոլորտային ծրագրերի ձևակերպումներն՝ ըստ ոլորտային ծրագրի օրինակելի ձևի, ներկայացված են հավելված 1-ում:

Աղյուսակ 12. Համայնքի ոլորտային ծրագրերի ամփոփագիր (Պարտադիր իրականացվող ծրագրերի ցանկ)

Հ/հ	Ծրագրի անվանումը	Չափի միավորը	Ծրագրի քանակական ծավալը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Ծրագրի կատարումն ըստ տարիների					Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները		
					2017	2018	2019	2020	2021	Համայնքի բյուջե	Դոնոր կազմակերպություններ	Պետ. բյուջե, այլ
1	Կառավարման ապարատի պահպանում	աշխատող	12	92421.0	17921.0	18500.0	18600.0	18700.0	18700.0	92421.0	-	-
2	Համայնքի ՆՈՒՀ երի պահպանում	երեխա	60	27000.0	5000.0	5200.0	5400.0	5600.0	5800.0	27000.0	-	-
4	Բնակչությանը սոցիալական օգնության տրամադրում	ընտանիք	50-80	12100.0	2500.0	2500.0	2500.0	2300.0	2300.0	12100.0	-	-
5	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	Ծառայություններ, ապրանքներ	X	32430.0	6465.0	6465.0	6500.0	6500.0	6500.0	32430.0	-	-
	Ընդամենը			163951.0	31886.0	32665.0	33000.0	33100.0	33300.0	163951.0	0.0	0.0

6. ՀԶԾ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ) ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՎԵՐԱՀՄԿՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՆԱՑՈՒՄԸ

ՀԶԾ-ի իրականացումը

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀԶԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային ծրագրերն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են ֆինանսավորման համապատասխան աղբյուրներ և ծախսեր: Գործնականում, ՀԶԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը:

ՀԶԾ-ում ներառված յուրաքանչյուր ոլորտային ծրագրի ղեկավարն պատասխանատվություն է կրում ծրագրով նախատեսված աշխատանքների համակարգման, համապատասխան ծախսերի կատարման, արդյունքների ստացման, հաշվետվությունների պատրաստման և ներկայացման համար:

ՀԶԾ-ի մշտադիտարկումը (մոնիթորինգը)

ՀԶԾ-ի ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀԶԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից կիսամյակը մեկ անգամ:

ՀԶԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների:

Աղյուսակ 14-ում ներկայացված է ՀԶԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը:

Աղյուսակ 14. ՀԶԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը

Ոլորտ.					
Ծրագիր.					
Միջոցառում.					
Արդյունքային ցուցանիշները		2017 թ., 1-ին կիսամյակ / տարեկան			
տեսակը	անվանումը	պլան.	փաստ.	շեղում	մեկնաբանություն
Մուտքային					
Ելքային (քանակական)					
Ելքային (որակական)					
Ելքային (ժամկետայնության)					
Արդյունավետության					
Ծախսեր, հազար դրամ					

ՀԶԾ-ի ներքին մոնիթորինգի արդյունքները փաստաթղթի տեսքով ՀԶԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ն կներկայացնի համայնքի ղեկավարին, վերջինս էլ օրենքով սահմանված կարգով այն կներկայացնի համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

ՀԶԾ-ի վերահսկումը

ՀԶԾ-ի վերահսկողությունը ապահովում է ՀԶԾ-ում ներառված ծրագրերի ամբողջական իրականացումը, ռեսուրսների արդյունավետ օգտագործումն առաջադրված խնդիրները կատարելու, ակնկալվող արդյունքները ձեռք բերելու և սահմանված նպատակներին հասնելու համար, ծրագրերի պաշտպանվածությունը սխալներից ու ձախողումներից, ժամանակին ու ճշգրիտ տեղեկատվության ստացումը ՏԻՄ-երի ավելի հիմնավորված որոշումների կայացման համար: ՀԶԾ-ի վերահսկողությունը ենթադրում է՝

- ✓ ՀԶԾ-ի մշակման, քննարկման և իրականացման ընթացակարգերի հստակ պահպանում,
- ✓ ոլորտային ծրագրերով առաջադրված խնդիրների կատարման արդյունքների ստուգում,
- ✓ ոլորտային ծրագրերի պահանջներից շեղումների պարզաբանում և պատճառների բացահայտում,
- ✓ ՀԶԾ-ի ծրագրերի իրականացումից ստացված արդյունքների ամփոփում և համադրում ծրագրերի նպատակների, խնդիրների և նախատեսված արդյունքների հետ:

ՀԶԾ-ի վերահսկողության արդյունքները ներկայացվում են համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

ՀԶԾ-ի տարեկան և հնգամյա գնահատումը

ՀԶԾ-ի իրականացման տարեկան կամ հնգամյա գնահատումը կատարում են համատեղ ՀԶԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ն՝ հիմնվելով ՀԶԾ-ի կիսամյակային մոնիթորինգների արդյունքների վրա:

Համայնքի ղեկավարը կազմակերպում և անցկացնում է ՀԶԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության աշխատանքային քննարկումներ, հանրային բաց լսումներ :

Արդյունքում՝ ՀԶԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ն լրամշակում է ՀԶԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության նախագիծը, պատրաստում է դրանց վերաբերյալ ավագանուն տրամադրվող տեղեկատվությունը (ամփոփաթերթը և տեղեկանքը) և ներկայացնում համայնքի ղեկավարին: Համայնքի ղեկավարը ՀԶԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության լրամշակված նախագիծը և դրան կից փաստաթղթերը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և որոշման կայացմանը:

ՀԶԶԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության նախագծի կազմման, քննարկման և որոշման կայացման վերաբերյալ ընթացակարգերը նույնությամբ վերաբերում են նաև ՀԶԾ-ի իրականացման հնգամյա հաշվետվության նախագծի կազմմանը, քննարկմանը և որոշման կայացմանը:

ՀԶԾ-ի վերանայումը

Հիմնվելով ՀԶԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, ՀԶԾ-ի վերանայման անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարը ՀԶԾ-ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ իր և (կամ) համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք ավելացնում են ՀԶԾ-ի իրականացման ծախսերը, համայնքի ավագանու որոշմամբ ընդունվում են միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդով:

ՀԶԾ-ի փոփոխությունները և (կամ) լրացումները, ավագանու հաստատումից հետո, հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկականի համայնքի 2017-2021 թվականների հնգամյա ծրագիրը հիմք է հանդիսանալու համայնքի գալիք հինգ տարիների տարեկան ծրագրերի և բյուջեների մշակման և կատարման աշխատանքները կազմակերպելիս: 2017-2021 թվականների ընթացքում ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացմանն են ուղղված լինելու համայնքի ՏԻՄ-երի ջանքերն ու աշխատանքը՝ մոբիլիզացնելով համայնքի ֆինանսական, մարդկային և նյութական ռեսուրսների ողջ պոտենցիալը:

Ծրագրում տեղ են գտել մի շարք ռազմավարական խնդիրներ, որոնց իրականացումը անխզելիորեն կապված է պետական կառույցների, միջազգային դոնոր կազմակերպությունների, տեղական ՀԿ-ների և այլ շահագրգիռ կողմերի և կառույցների հետ արդյունավետ համագործակցության հետ: ՀԶԾ-ի իրագործումը հնարավորություն կտա քայլ առ քայլ մոտենալ հեռվում նշմարվող այն ցանկալի տեսլականին, որպիսին ցանկանում է տեսնել համայնքը նրա յուրաքանչյուր բնակիչ:

ՀԶԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին: ՀԶԾ-ի ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

Յուրաքանչյուր հաջորդ տարի կկատարվի ՀԶԾ-ի իրականացման նախորդ տարվա արդյունքների ուսումնասիրություն, ամփոփում, ձեռքբերումների գնահատում և թերությունների բացահայտում: Նախորդ տարվա արդյունքների հիման վրա համապատասխան ուղղումներ և լրացումներ կկատարվեն մնացյալ տարիների ծրագրերում:

**ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ
ՊԱՀԱՆՁՈՂ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ
ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԻ**

Ծրագիր 01

Խմելու ջրի ներքին ցանցի վերակառուցում և վերանորոգում (գ. Հայկավան)

(Ծրագրի անվանումը)

Կոմունալ տնտեսություն (ջրամատակարարում)

(Ոլորտի անվանումը)

Հայկավանի համայնքապետարան

(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 250000.0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը՝

✓ Վերանորոգում ,վերակառուցում

Ծրագրի հիմնավորումը

Հայկավանում խմելու ջրի ներքին ցանցի մեծ մասը (մոտ 20 կմ)կառուցվել է 1960-ական թվականներին,այն քայքայված վիճակում է, ինչը պատճառ է դառնում ջրամատակարարման անընդհատ խափանումների և ջրի՝ մեծ ծավալով կորուստների,առաջացնելով դժգոհություններ ազգաբնակչության շրջանում:

Ծրագրի նպատակները

Նպաստել բնակչության կենսամակարդակի բարձրացմանը՝ բարելավելով խմելու ջրի ջրամատակարարման ծառայությունների որակը,համայնքի բոլոր տնտեսություններին ապահովել շուրջօրյա ջրամատակարարմամբ:

Ծրագրի խնդիրները

- ✓ Նախապատրաստել խմելու ջրի ցանցի նորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
- ✓ Իրականացնել խմելու ջրի ցանցի վերանորոգման և վերակառուցման աշխատանքները
- ✓ Իրականացնել տեխնիկական վերահսկողություն և ընդունել խմելու ջրի ցանցի նորոգման աշխատանքների կատարման ավարտական ակտը

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	2017թ., Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Նախապատրաստել խմելու ջրի ցանցի նորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը												
2	Իրականացնել խմելու ջրի ցանցի վերանորոգման և վերակառուցման աշխատանքները												

Հ/հ	Ծրագրերի իրականացման քայլերը / գործողությունները	2018թ., Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
3.	Իրականացնել խմելու ջրի ցանցի վերանորոգման և վերակառուցման աշխատանքները												
4.	Իրականացնել տեխնիկական վերահսկողություն և ընդունել խմելու ջրի ցանցի նորոգման աշխատանքների կատարման ավարտական ակտը												

Ծրագրի ակնկալվող արդյունքները

Խմելու ջրի ցանցի նորոգման արդյունքում կունենանք վերանորոգված ենթակառուցվածք՝ խմելու ջրի ներքին ցանց, համայնքի ողջ բնակչությունը ապահովված կլինի շուրջօրյա ջրամատակարարմամբ:

Խմելու ջրի ցանցի նորոգման արդյունքում կբարելավվի մարդկանց կենսամակարդակը, համայնքը հնարավորություն կունենա մատուցել որակյալ ծառայություններ:

Կապը այլ ծրագրերի հետ

Այս ծրագիրը կապված է Հայկական համայնքի ներհամայնքային ճանապարհների բարեկարգման ծրագրի հետ, քանի որ այն պետք է իրականացվի նախքան ճանապարհների բարեգարգումը, որպեսզի հետագայում քանդման աշխատանքներ չիրականացվեն և ապահովվի նորոգված ջրագծի հետագա անխափան շահագործումն ու պահպանումը:

Ծրագրի բյուջեն

ա/ծրագրի ֆինանսավորման աղբյուրները

Խմելու ջրի ցանցի վերակառուցման և վերանորոգման ծրագրի իրականացման ծախսերը՝ 250000.0 հազար դրամ, ֆինանսավորվելու են գերմանական KFW բանկի վարկային ծրագրի 3-րդ փուլի շրջանակներում:

բ/ծրագրի ծախսերն՝ ըստ ծախսերի գործառնական դասակարգման

Հ/հ	Ծրագրերի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					
		2017	2018	2019	2020	2021	Ընդամենը
